

Մաքսերի և առևտրի 1994թ. գլխավոր համաձայնագրի Մարաքեշի արձանագրություն

Անդամները,

համաձայն Ուրուգվայի փուլի մասին Նախարարական որոշման բանակցություններ իրականացնելով ՍԱԳՀ-1947-ի շրջանակներում, սույնով համաձայնում են հետևյալի մասին.

1. Սույն Արձանագրությանը կցված Անդամին վերաբերող Ժամանակացանկը դառնում է այդ Անդամին վերաբերող ՍԱԳՀ-1994-ի Ժամանակացանկ այն օրը, երբ ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այդ Անդամի համար: Առավել թույլ զարգացած երկրներին ի օգուտ միջոցների մասին նախարարական որոշման համաձայն ներկայացված ցանկացած ժամանակացանկ կցված է համարվում սույն Արձանագրությանը:

2. Մաքսադրույքի նվազեցումը, որին համաձայնել է յուրաքանչյուր Անդամ, իրականացվում է դրույքաչափի հինգ հավասար նվազեցումների միջոցով՝ բացառությամբ Անդամի Ժամանակացանկում այլ կերպ հատկանշվածի: Առաջին այդպիսի նվազեցումը ուժի մեջ է դրվում ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը. յուրաքանչյուր հաջորդական նվազեցում ուժի մեջ է դրվում յուրաքանչյուր հաջորդական տարվա հունվարի 1-ին, և վերջնական դրույքաչափն ուժի մեջ է մտնում ոչ ուշ, քան ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից չորս տարի հետո՝ բացառությամբ Անդամի Ժամանակացանկում այլ կերպ հատկանշվածի: _ Անդամը, որն ԱՀԿ համաձայնագիրն ընդունում է այն ուժի մեջ մտնելուց հետո, Համաձայնագիրն իր համար ուժի մեջ մտնելու օրն ուժի մեջ է դնում դրույքաչափի արդեն կատարված բոլոր նվազեցումներն այն նվազեցումների հետ միասին, որոնք նախորդ նախադասության համաձայն նա պարտավոր կլինեք ուժի մեջ դնել հաջորդող տարվա հունվարի 1-ին, և ուժի մեջ է դնում նախորդ նախադասությամբ հատկանշված ժամանակացանկի բոլոր մնացյալ նվազեցումները, եթե այլ բան չի նախատեսված իր Ժամանակացանկում: Նվազեցված դրույքաչափը յուրաքանչյուր փուլում կլորացվում է մինչև առաջին տասնորդականը: Գյուղատնտեսության մասին համաձայնագրի 2-րդ Հոդվածով սահմանված գյուղատնտեսական արտադրանքի համար նվազեցումների փուլային կատարումն իրականացվում է այնպես, ինչպես հատկորոշված է ժամանակացանկերի համապատասխան բաժիններում:

3. Սույն Արձանագրությանը կցված ժամանակացանկերում պարունակվող զիջումների և պարտավորությունների իրականացումը պահանջ ներկայացվելու դեպքում ենթակա է Անդամների կողմից բազմակողմ քննության: Սույնով վնաս չի հասցվի Անդամների՝ ԱՀԿ համաձայնագրի IԱ Հավելվածի համաձայնագրերով սահմանված իրավունքներին ու պարտավորություններին:

4. Այն բանից հետո, երբ սույն Արձանագրությանը կցված՝ Անդամին վերաբերող Ժամանակացանկը ՍԱԳՀ-1994-ի Ժամանակացանկ է դառնում համաձայն 1-ին կետի դրույթների, այդ Անդամն ազատ է ցանկացած պահի ամբողջությամբ կամ մասամբ կասեցնել կամ հանել այդ Ժամանակացանկի ցանկացած զիջում այն արտադրանքի մասով, որի համար հիմնական մատակարար է Ուրուգվայի փուլի որևէ այլ մասնակից, որի Ժամանակացանկը դեռ ՍԱԳՀ-1994-ի Ժամանակացանկ չի դարձել: Այդպիսի գործողություն, այնուամենայնիվ, կարող է ձեռնարկվել միայն զիջման ցանկացած այդպիսի կասեցման կամ հանման մասին Ապրանքների առևտրի խորհրդին գրավոր ծանուցելուց և պահանջվելու դեպքում ցանկացած այն Անդամի հետ խորհրդակցություններ անցկացնելուց հետո, որին վերաբերող ժամանակացանկը դարձել է ՍԱԳՀ-1994-ի Ժամանակացանկ, և որը տվյալ արտադրանքի մասով էական շահագրգռություն ունի: Այդ կերպ կասեցված կամ հանված ցանկացած զիջում կիրառվում է այն օրը, երբ հիմնական մատակարարման շահագրգռություն ունեցող Անդամի Ժամանակացանկը դառնում է ՍԱԳՀ-1994-ի Ժամանակացանկ, և դրանից հետո:

5. ա) Առանց վնասելու Գյուղատնտեսության մասին համաձայնագրի 4-րդ Հոդվածի 2-րդ կետը, ՍԱԳՀ-1994-ի II Հոդվածի 1«բ» և 1«գ» կետերում այդ Համաձայնագրի ժամկետի հիշատակման նպատակով յուրաքանչյուր արտադրանքի առնչությամբ, որը ենթակա է սույն Արձանագրությանը կցված զիջումների ժամանակացանկով սահմանված զիջումի, կիրառելի ժամկետ է սույն Արձանագրության ժամկետը:

բ) ՄԱԳ-Հ-1994-ի II Հոդվածի 6«ա» կետում այդ Համաձայնագրի ժամկետի հիշատակման նպատակով, սույն Արձանագրությանը կցված զիջումների ժամանակացանկի առնչությամբ կիսաշեղծ ժամկետ է սույն Արձանագրության ժամկետը:

6. Ժամանակացանկերի III Բաժնում պարունակվող ոչ մաքսային միջոցների մասով զիջումների փոփոխման կամ հանման դեպքերում կիրառվում են ՄԱԳ-Հ-1994-ի XXVIII Հոդվածի և 1980թ. նոյեմբերի 10-ին ընդունված «XXVIII Հոդվածի համաձայն վարվող բանակցությունների ընթացակարգերի» (BISD 27S/26-28) դրույթները: Սույնով չեն վնասվում Անդամների՝ ՄԱԳ-Հ-1994-ով սահմանված իրավունքներն ու պարտավորությունները:

7. Յուրաքանչյուր դեպքում, երբ սույն Արձանագրությանը կցված ժամանակացանկով որևէ արտադրանքի համար ավելի նվազ բարենպաստ վերաբերմունք է ստեղծվում, քան այդ արտադրանքի համար ՄԱԳ-Հ-1947-ի Ժամանակացանկերում նախատեսված էր նախքան ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելը, համարվում է, որ այն Անդամը, որին վերաբերում է ժամանակացանկը, ձեռնարկել է համապատասխան գործողություն, որն այլապես անհրաժեշտ կլիներ համաձայն ՄԱԳ-Հ-1947-ի կամ ՄԱԳ-Հ-1994-ի XXVIII Հոդվածի: Սույն կետի դրույթները կիրառվում են միայն Եգիպտոսի, Պերույի, Հարավային Աֆրիկայի և Ուրուգվայի նկատմամբ:

8. Սույնին կցված Ժամանակացանկերը վավերական են անգլերենով, ֆրանսերենով կամ իսպաներենով, ինչպես որ հատկորոշված է յուրաքանչյուր Ժամանակացանկում:

9. Սույն Արձանագրության ժամկետն է 1994թ. ապրիլի 15-ը: